ՍԻՕՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԱՕԳՈՒՅԻՆ, ՐԱՆԱՓԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՀՐՕՂԱՆ ՄԻԱՄԵԱՑ



ՅԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
1871

ՊՈՀԻՍ

ԿԱՐԱՍՈՒՆ

ԿԱՄԵՑԱՓԵՂԵՄ · ԿԱՄԵՂՈՒՍՅԱՆ · ԿԱՓՅԵՓԶԵ
ԿԱՅԵՂԵՄԵՐԵՆ ՀԱ

ԱՌԱՋԱՎՈՐԱՊԵՍ
ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿԱԼՓԱՆ

ՎԱԼԵՆՍԻԱՅՈՒՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ Ի

1871



ՍԻՈՆ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 12.

ԱՄՍԱԳԻՐ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31. 1871.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՄԻՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Սիոն և Ադթամարաց կաթողիկոսական խնդիրները, քանի մի տարի էին 'ի վեր, դրաւած էին Ազգային Պարչութեան և համօրէն Ազգի ուշադրութիւնը։ Առենական արձանագրութիւնք, պարբերական հրատարակութիւնք, մասնաւոր տեղեկագիրք և յայտարարութիւնք, աւելի կամ նուազ սոյն խնդրոյ նշանակութիւնները կը կրեն։ Արդարեւ՝ խնդրոյ լուծումն առաւել քան զանազան յետաձգեցաւ, բայց բաւականին քանաւոր և դրաւոր կարծիքներ եւս յերեւան եկան, յուզեցան և պարզեցան։

Սոյն խնդրոյ առաջինն, այսինքն Սոյ Կաթողիկոսականն, իւր լուծումն ստացաւ ընտրութեամբ և վաւերացմամբ նորընտիր և երանաշնորհ Կաթողիկոսի Տանն Կիլիկիոյ Տ. Տ. Մկրտչի Պարաշուոյ։ Անդրադարձաւ Նիկոմեդիան կարծեցեալ կուսակցութիւնը, ստուերացաւ Աջապահեան կամ Ցեղապետական կաթողիկոսութեան բռնազբօսիկ դրութիւնն. փարատեցաւ թեմական խնդրութեան նորերեւոյթ մռայլն, և ապահովեցաւ Եկեղեցւոյ միութիւնը, որ ազգային միութեան դրաւականն է 'ի սկզբանէ անտի քրիստոնէական լուսաւորութեան Ազգիս Հայոց։

Արդարև՝ դարուց փոփոխմունքը, քաղաքական հանգամանքները և տեղական յարաբերութեանց դժուարութիւնքը յառաջ բերած են երկու կամ երեք կաթողիկոսական աթոռներ, երկու կամ երեք կաթողիկոսներ, բայց Եկեղեցին միշտ անխախտ մնացած է իւր ներքին և էական միութեան մէջ, և միշտ խոստովանած է արդեամբ, որ մի է իւր քահանայութիւնը, մի է իւր եպիսկոպոսութիւնը, մի է իւր կաթողիկոսութիւնը, մի է իւր միւռոնն, մի է իւր ձեռնադրութիւնն, մի է իւր օծումն, մի է իւր ծիսարանն, մի է իւր դաւանութիւնն, մի է և իւր վարդապետութիւնն։

Ինչպէս քահանայից և եպիսկոպոսաց բազմութեամբ ենթադրուած չէ երբէք տարբեր քահանայութիւն և եպիսկոպոսութիւն, նոյնպէս և ոչ կաթողիկոսաց երկուութեամբ կամ երեքնութեամբ տարբեր կաթողիկոսութիւն։ Այսն զի Եկեղեցւոյ միութեան խարիսխը ոչ թէ անձանց սակաւութեան կամ շատութեան, ոչ թէ աթոռոյ կամ աթոռներու, ոչ թէ աթոռական կամ աթոռականներու, այլ իւր դաւանութեան, իւր վարդապետութեան, իւր ծիսից և արարողութեանց մէջ խոստովանուած է։ Այսն զի սեղանք և անձինք ժամանակի և արտաքին պարագաներու ենթակայ են, կարեն փոփոխիլ, կարեն առ ժամանակ մի ընդհատիլ, կարեն առաւելուլ և նուազիլ, կարեն դժոխիլ և խաղաղիլ, (ինչպէս պատահած է երբեմն)։ Իսկ սկզբունքի և դաւանութեան միութիւնն այնպէս չէ։ Նա հաւաքական միութեան խոստովանութիւնն է։ Նա շատ արտերու միօրինակ խորհուրդն և շատ ձայներու միօրինակ արտասանութիւնն է։ Ուր անխախտ է այս ներքին միութիւնը, այն տեղ չը կայ բնաւ երկուութիւն կամ երեքնութիւն։ Տասներկու էին Քրիստոսի առաքեալները, բայց մի էր իրենց առաքելութիւնը, մի և իրենց կոչումն։ Այսոր կաթողիկոսները՝ մի, երկու կամ երեք եղած են ըստ բերման ժամանակին, բայց մի եղած է իրենց կաթողիկոսութիւնը, Աղդին կամ Եկեղեցւոյն համար։ Այսօր ևս մի է նոյն կաթողիկոսութիւնը, թէպէտ և կաթողիկոսները երկու կամ երեք։ Չկայ, չէ եղած և կարող չէ լինիլ Հայաստանեայց Եկեղեցւոյն մէջ երկու էապէս տարբեր կաթողիկոսութիւն, վասն զի մին իսկոյն կը մերժուի և կաթողիկոսութիւն չը համարուիր նոյն Եկեղեցւոյն համար, ինչպէս է մեր Հռովմէադաւան ազգայնոց կաթողիկոսութիւնը, որ սկզբունքով, ընտրութեան և վաւերացման եղանակաւ և դաւանութեամբ տարբեր լինելով, կարող չէ երբէք Հայաստանեայց Եկեղեցւոյ կաթողիկոսութիւն համարուիլ։

Հայաստանեայց Եկեղեցւոյ խոստովանած կաթողիկոսութիւնը մի է, և փոյթ չէ, եթէ կը կրէ Էջմիածնի Սոյ և Աղթամարայ անուն, վասն զի երբեմն եւս կրած է անուն Դւնայ, անուն Անւոյ, անուն Թաւրիզայ և այլն։ Այս անունները ինքնին կարող են միանալ, երբ տարտաքին պարագաները նպաստեն, և երբ Աղգը իրապէս համոզուի, որ տեղեաց միութեամբ՝ անվնասք կարող է մնալ իւր կաթողիկոսական ներքին միութիւնը։

Մենք կարող ենք համարձակ ասել, որ Աղգային Այրութիւնը Պոլսոյ կաթողիկոսի ներկայ ընտրութեամբ և հաստատութեամբ, տարաւել ապահովեց Հայաստանեայց Ե-

եկեղեցւոյ՝ կաթողիկոսական միութիւնն ու հաւատիւնը, և մաքրեց զբեց քանի մի սեւաթոյր բիծերէ, ինչպէս էին Աստուածահան ցեղապաշտութիւնը և թեմական խորութիւնը, որ յետին ժամանակաց և յետաստիս մնաց ազատդրութիւնք էին՝ և ոչ թէ Եկեղեցւոյ առաքելական Տեսչութեան ընկղմունք, որ 'ի սկզբանէ անտի ընտրութեան վրայ հիմնուած է և ոչ ցեղապաշտութեան, արժանաւորութեան՝ և ոչ թեմականութեան։ Մենք այնպէս կ'ընդունինք, որ եկեղեցականի ցեղը կամ տոհմը, թեմը կամ որդանը ժողովուրդն է և Եկեղեցին, որ զինքը 'ի պաշտօն կը կոչէ։ Նորա պաշտօնի բուն վիճակը կամ տահմանը Աւետարանի վարդապետութեան տահմանն ու ցանկն է, զոր չէ կարող խլամտեսել՝ առանց իւր պաշտօնէն դադրելու։ Նորա հաւատարմութեան ուխտը՝ Եկեղեցւոյ աւանդապահութեան ուխտն է։ Այս ուխտը, ուր որ կատարուի, թէ Յէչմիածին և թէ 'ի Սիս, պահանջող է Եկեղեցին. վասն զի Էչմիածինն ու Սիսն եւս Եկեղեցւոյն են։ Եթէ ենթադրենք, որ մի և նոյն Եկեղեցին երկու տարբեր ուխտ կը պահանջէ, ստատիկ հակասութեան մէջ կը դնենք և Եկեղեցին Եկեղեցւոյ դէմ զինելով կը քայքայենք նորա նուիրական միութիւնը։

Սոյն միութեան ճշմարտութիւնը աւելի կը պարզուի, երբ եկեղեցական հովուաց և կաթողիկոսաց յարաբերութեան էական պայմանները նկատողութեան առնունք։

Ի՞նչ է եկեղեցական պաշտօնէութիւնն, եթէ ոչ ապաստաւորութիւն աստուածային Բանի, ծառայութիւն ընդհանուրին 'ի սէր Աստուծոյ և 'ի շինութիւն համօրէն Եկեղեցւոյն։

Ի՞նչ յարաբերութիւն կարէ լինել սանձօրինակ նուիրական պաշտօնի պաշտօնակալաց մէջ, եթէ ոչ բարեյական քաջալերութիւն, օժանդակութիւն, միաբան գործակցութիւն 'ի կատարումն միակ նպատակի, և փոխադարձ սէր և վստահութիւն։

Արդ՝ եկեղեցական պաշտօնէութիւնն, եթէ իւր առաքելականութեան և պարզութեան մէջ նկատենք, կը տեսնենք ակներեւ, որ Եկեղեցին որոշած է ամէն պայման, ամէն յարաբերութիւն և ամէն սահման։ Ով է Պօղոսը կամ ով է Ապողոսն, եթէ ոչ ծառայք հաւատացելոց վասն Քրիստոսի։ Ով է Էչմիածնի եպիսկոպոսն և ով է Սսոյ եպիսկոպոսն, եթէ ոչ սպասաւորք Հայ Ժողովրդեան 'ի սէր Աստուծոյ։ Ով է Էչմիածնի կաթողիկոսն և ով է Սսոյ կաթողիկոսն, եթէ ոչ պաշտօնեայք և աւանդապահք Հայաստանեայց Եկեղեցւոյ, եթէ ոչ՝ տեսուչք և դիտապետք եկեղեցական կարգաց և կանոնաց, եթէ ոչ՝ ընտրեալ մշակք և առաջնորդք ազգային բարոյական և մտաւոր լուսաւորութեան։ Այնչափ փառաւոր կարող է լինել իրենց պաշտօնը, որչափ մեծ է իրենց ծառայութիւնը, անթերի իրենց արթնութիւնը, անկեղծ իրենց արիութիւնը և կատարեալ՝ իրենց անձնուիրութիւն։ Այսն զի, բարոյական պաշտօնի մեծութիւնն ու փառքը այս պայմաններով միայն կը չափուին և ոչ թէ արտաքին երեւոյթներով, վիճակաց բազմամարդութեամբ, նիւթական ճոխութեամբ և աշխարհային շքեղութեամբ։

Մենք միայն կը լսենք, և տակաւին չը դիտենք՝ թէ Ազգային Երեսփոխանութիւնն ինչ պայմաններ կամ կանոններ որոշած է կամ պիտի որոշէ կաթողիկոսաց և Ազգային Վարչու-

թեան յարաբերութեանց նկատմամբ։ Բայց մեր կողմէն այնչափը միայն կասենք, որ եկեղեցական տեսչութեան մէջ, յարաբերութեանց պայմաններն միայն բարոյական կարող են լինել, ինչպէս որ եղած են 'ի սկզբանէ, և ոչ տարօրինակ։ Աշխարհային փառաւորութեան, ատիճանի բարձրութեան կամ ստորնութեան դիտումներ բնաւ երբէք կարող չեն տեղի ունենալ բարոյական իշխանութեան մէջ։ Եւ այս եւս կը յաւելուինք, որ կաթողիկոսութեան միութեան սկզբունքը անարատ և անսասան պահպանելու համար, ամեն պայման մի միայն իրաւանց և պարտուց, համարառութեան և համարատուութեան մէջ եղերելու է, և ոչ այլուր։ Բարոյական յարաբերութեան առաջին և միակ պայմանն այս է, որ Եկեղեցին կամ Ազգը ճանաչէ որ ինքն համարառու է, իսկ ընարեալ պաշտօնեան՝ ճանաչէ, որ ինքն պատասխանատու է Աստուծոյ, համարատու է ժողովրդին։ Եկեղեցական պաշտօնէութիւնն, եթէ իրաւունք, իշխանութիւն և ազատութիւն մի ունի, այն եւս իւր պարտուց կատարման ազատութիւնն է, այսինքն ազատ է որչափ կամի հոգեւոր բարիք մատակարարել իրեն յանձնուած հօտին։ Իսկ Եկեղեցւոյ վարդապետութենէն, դաւանութենէն և դարերով որքազարծուած ծէսերէն և աղարողութիւններէն, նշանախեց մի փոփոխելու անգամ իրաւունք և ազատութիւն չունի. վասն զի սոյն իրաւունքը միմիայն Եկեղեցւոյ անկախութեան սեպհականութիւնն է և ոչ որ և իցէ անհատի, կամ եկեղեցական պաշտօնէի։ Այս հիմնական պայմանները հանդիսապէս խոստովանելէն զինի, թէ յարաբերութիւն կը մնայ ասելն Չիմիածնի, Սսայ և Աղթամարայ կաթողիկոսաց և Ազգային Պարտութեան մէջ, և կամ Չիմիածնի, Սսայ և Աղթամարայ կաթողիկոսաց մէջ, եթէ ոչ ՀԱՄԱԿԱՄՈՒԹԻՒՆ 'ի բարոյական շինութիւն ընդհանուրին, եթէ ոչ ՄՐՑՈՒՄՆ սիրոյ և գործունէութեան, եթէ ոչ ԱՂԱԿՑՈՒԹԻՒՆ 'ի միակ և 'ի վեհ պաշտամանն կաթողիկոսութեան։

Ամփոփենք մեր խօսքը։

Հայաստանեայ Եկեղեցին շատ քահանայք, շատ վարդապետք և եպիսկոպոսունք ունի, բայց մի քահանայութիւն, մի վարդապետութիւն և մի եպիսկոպոսութիւն։ Երկու կամ երեք կաթողիկոսներ ունի, բայց մի կաթողիկոսութիւն, մի հայրապետութիւն և մի քրիստոնէական կոչումն Աբեւելքի մէջ։ Ով որ այսպէս ջամբբռներ կաթողիկոսութիւնը, նա կը հակառակի Եկեղեցւոյ ոգւոյն և կը մեղանչէ ժողովրդի բարեպաշտական ամբիծ համոզման դէմ, որ Եկեղեցւոյ պաշտօնէից սակաւութեան կամ շատութեան մէջ բնաւ երբէք երազած չէ սկզբունքի և դաւանութեան տարբերութիւն։

Ուրեմն գոհութեամբ սրտի գովելով Վեհափառ Ժողովոյն Ազգային Պարտութեան համակամ քննարկութիւնն ու վաւերացումն, և շնորհաւորելով արժանապատիւ Տ. Տ. Սկրտիչ կաթողիկոսի մեծ և նուիրական պաշտօնն, հայցեմք Աստուծոյ, որ զօրացնէ թէ զինքն և թէ զերանաշնորհ կաթողիկոսն Ս. Չիմիածնի, ատուաածահաճոյ խորհրդով հանդարտահ իմաստութեամբ և քաջարթուն արիութեամբ՝ գործել 'ի շինութիւն և 'ի միութիւն Ազգին, 'ի պայծառութիւն Եկեղեցւոյ և 'ի փառս միոյն Աստուծոյ։

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ

(Շարունակութիւն, տես թիւ 11։)

Բարկութիւն։

Այս կիրք ամբոխել զմիտս, այլայլուն զդէմս, տագնապել զշրջան աբեան և վեր 'ի վայր առնել զբովանդակ կենսական և մտնդական զօրութիւն մարմնոյ, նաեւ երբեմն պատճառել զյանկարծական մահ։

Վասն այսր կրից այնչափ սաստիկ է, որչափ մահաբեր թոյն, յատկապէս յայնոսիկ՝ որք են փափկասունք, տկարամարմինք, և որք ըմբռնեալ են 'ի ջղային, 'ի թոքային և 'ի լերդային ցաւս, 'ի շնչարգել կամ յաչացաւս, զի այսպիսի անձինք բաղում անգամ սաստիկ բարկութեամբ պատճառեն զմահ անձին կամ սաստկացուցանեն զցաւ իւրեանց։ Վասն որոյ ամենայն խոհականութեամբ արժան է առհասարակ ամենեցուն, եթէ առողջաց, եթէ տկարաց և եթէ ախտաւորաց կարի զգուշութեամբ զդէմ ունել այսմ վտանգաւոր կրից։

Կարի ճշմարիտ է, թէ չէ միշտ 'ի կարողութեան մերում 'ի սաստել ըզբարկութիւն մեր. բայց հաւաստեաւ հնար է ամենեցուն մերժել 'ի որոշ զօթագայեալ ցասումն կամ զնիւթ բարկութեան, գուն գործելով մոռանալ զաւիթն, կամ հանել յաչաց 'ի բաց՝ եթէ կարեւոր է զպատճառն. քանզի ոչինչ այնչափ անհանգիստ առնէ զմեզ, որչափ բարկութիւնն, յատկապէս ցասումն վրէժխնդրութեան, որ իբրեւ զբոց վառէ զսիրտ մեր, և բորբոքէ զմեզ իբրեւ զշանթիս երկաթոյ, և վարանեալ զմիտս՝ առնէ ըզմեզ իբրեւ զկատաղի գազան. յորմէ և պատճառի երկարատեւ հիւանդութիւն, կամ յանկարծակի մահք ժայթմամբ արեան, որպէս և ժամանակաւինչ առաջ պատահեցաւ 'ի Սամարանդ՝ մեր մի 'ի հայազանց մերոց, որ 'ի սաստիկ ցասմանէ ժայթքեաց արիւն և մատնեցաւ 'ի մահ։ Զիւր ինչ ճշմարիտ գերազանցութիւն մտաց և գերազնիւ բարեդիտութիւն սրտի, քան մուանալ ըզվնասս կրեալս յումեքէ, և ներել յանցանսն 'ի սրտէ։ Նա այս ընդ այսմ ըզխաղաղութիւն ընկերութեան և ընձեռէ անձին մերում զհանգստութիւն, զառողջութիւն և զբարեբաստութիւն։ Ով որ ճանաչէ զանգին արժանիս առողջութեան, զյարգ խաղաղութեան կենաց և զանդորրութիւն մտաց, պարտ է մերժել յինքեանէ զյօժարութիւն բարկութեան և զցասումն վրէժխնդրութեան, զի ազատ մնասցէ 'ի բոլորն հարուածոց նորա. և վայելեսցէ զառողջ և զխաղաղ կեանս։

Երկ։

Ներգործութիւն երկիւղի 'ի պատճառել կամ 'ի ծանրացուցանել զհիւանդութիւնն՝ է կարի սաստիկ։

Հոգւոյն ուրուք զհամեստ գործառնութեանց 'ի պէտս կենաց, չէ բնաւ նախատելի. բայց որ սաստիկ ցանկութեամբ զհետ լինի այնմ, բաղում անգամ կորուսցէ զարս և ունէր։ Այսպէս և զկասկած իրիք վնասու, վտանգի կամ զհիւանդութեան հնար է խափանել, բայց սաստիկ երկիւղ և անձկութիւն սրտի ոչ միայն բառնայ զամենայն միջոց դիւրութեան, այլ ճնշեալ զզօրութիւն մարմնոյ, բերէ 'ի մեզ զանհնարին հիւանդութիւն, զսասանումն զդայութեանց և ըզ-

լքումն մոտաց, որոց վախճանն է ելք կենաց։

Յանկարծակի երկիւղն կամ սաստիկ ուշի զսաստիկ ներգործութիւն 'ի վերայ մարմնոյ և 'ի վերայ մտաց, զի պատճառէ զվերնոտութիւն կամ զկարկամեցուցիչ և ցնցողական հիւանդութիւն, որ կարի տաժանելի է և գրեթէ անբժշկելի։ Վասանդ այս պիսի երկիւղի հաստատակ է երեխայից, մանկանց և տղայոց, որք 'ի զարհուրանաց ինչ կորուսանեն զկեանս, կամ վասանգին 'ի ցնորամտութիւն և կամ յայլ կենսական պակասութիւն ինչ։ Վասն որոյ հարկ է ամենայն գորովագութ ծնողաց ամենայն զգուշութեամբ փոյթ տանիլ աղաստ պահել 'ի զարհուրեցուցիչ առարկայէ և 'ի սարսափելի իրաց, 'ի ձայնէ անասնոց, և յատկապէս 'ի զարհուրելի պատմութենէ։ Քանզի բաց 'ի վասանգէ, եթէ երկիւղ ինչ տպաւորեացի 'ի նոսա, անհնարին է դիւրաւ վտարել զայն 'ի նոցանէ, որ և առ սակաւ սակաւ հաշէ և հիւծէ զմարմինն մինչեւ ցմահ։ Այս զգուշութիւն երկիւղի ոչ միայն հարկաւոր է առնել վասն երեխայից, այլ և մարդ լոկ, որք դիւեցուցանեն զերեխայն, քանզի երկիւղ մօրն թուանաւորէ ըզկոթն, և պատճառէ երեխային բնական շարժումն կամ կարկամումն միանգամ, որ հանէ զնա 'ի գրկաց մօր 'ի մէջ վեց կամ երկոտասան ժամու։

Առ սակաւ սակաւ ներգործութիւն երկիւղի կարի վտանգաւոր է։ զի մչտական երկիւղ անցեալ արկածից կամ ապառնի չարեաց պատճառէ կարի վնասակար հետեւանս։ և գրեթէ բազումք մեռանին յայնպիսի հիւանդութենէ, որ պատճառեալ է յերկարատեւ զարհուրանաց, կամ տպաւորեալ 'ի միտս 'ի սաստիկ երկիւղէ արկածից ինչ, և կամ յանմիտ կասկածանաց սկէսպէս չարագուշակ վտանգաց։ Լու այս գրեթէ բազում անգամ պատահի կանանց 'ի յերկունս ծննդեան, յորոց 'ի միոս կանխաւ տպաւորեալ երկիւղ ինն 'ի վտանգաւոր դիպուածոյ յերկունս ծննդեան այլոց, տուժին և ինքեանք 'ի կենաց։

Ընհնար է եթէ 'ի մեծամեծ քաղաքսն, յորս են բազմութիւն բնակչաց, ոչ լցէ այսպիսի տրտմալի վտանգ, զի պատահէ երբեմն երկու կամ երեք կանայք պատճառաւ իւրք մեռանին յերկունս ծննդեան։ և այս դէպք պատճառէ բազմաց մանկաբեր կանանց զմահ։ Վասնորոյ պարտ է նախ խոհական բանիւք յորդորել զկանայս եթէ 'ի յղութեան և եթէ յերկունս ծննդեան խոտել զամենայն երկիւղ և մտոտի կասկած 'ի սրտէ։ Երկրորդ՝ ամենայն զգուշութեամբ փոյթ տանիլ մերժել զընկերակցութիւն շաղակրատ և լեզուագար կանանց, որք սովոր են մատնել առ այսպիսիս, և անփակ բերանով շշնջել յականջս զչարաբաղդութիւն այլոց։ Լու երրորդ՝ ամենայն չար կամ տրտմալի լուր, կամ վտանգաւոր և երկիւղալի դիպուած ինչ, որոց հնար է պատճառել 'ի նոսա սաստիկ տրտմութիւն, երկիւղ, խռովութիւն կամ բարկութիւն, պարտ է ամենեւին ծածկել 'ի նոցանէ, եւս և 'ի ժամանակս դիւեցման մանկան։

Այս զգուշութիւն ըստ ամենայնի և ամենայնիւ հարկաւոր է վասն ամենայն հիւանդաց, յատկապէս վասն այնոցիկ, որք են 'ի վտանգի և որոց ախտացեալ են թոքայաւութեամբ, լերդացաւութեամբ, ուրվանալուծութեամբ, ջղային և փորբերան ախտիւ, և այլն։

Տրամաբանութիւն։

Տրամաբանութիւնն առաւել խափանիչ է առողջութեան քան զամենայն կիրս. զի ներդործութիւնք սորին են տեւողական և սաստիկ յոյժ, որ և յորժամ իսոր 'ի միտս տարրանայ, առաւել վնասակար է քան զԹոյն մահաբեր։

Տարկութիւն և երկիւղ են բընութեամբ զօրաւոր քան զայլ կիրս, բայց 'ի վնասել երբեմն երկարեն. սակայն տրամաբանութիւնն բազում անգամ փոխի 'ի սեւամաղձային Թաղծութիւն, որ և ուժգին իմն բռնանայ 'ի վերայ զօրութեանց մարմնոյ և մըտաց և մաշէ զկազմուածն մինչև ցըվախճան կենաց։

Ոչ կարէ ոք արդելուլ զդէպս իւրիք տարաբաղդութեան, բայց որ կարէ տանիլ այնմ խուզաղ մտօք և անդորր սրտիւ, ցուցանէ յինքն զՀըշմարիտ գերազանցութիւն մտաց և վսեմութիւն սրտի։ Սակայն են բազումք, որոց 'ի պատահել դժբաղդութեան ընկղմին 'ի սաստիկ տրամաբանութիւնս, և մերժեն յինքեանց միանգամայն զամենայն մխիթարութիւն և զյոյս. մինչեւ միտքն խոպառ ընկճեալ 'ի Թաղծութենէ՝ ընկղմի 'ի ծանր տարտամութիւն, 'ի վատնգ և 'ի կորուստ կենաց։ Այսպիսի Թըշուառ կեանք ոչ միայն անվայելուչ է մարդկութեան, այլ եւ ընդդէմ արդարութեան և մարդկային զգայութեան։ Վասն որոյ մինչ ոչ է բռնացեալ այսր կրից 'ի վերայ մեր, հարկ է մեզ ամենայն զգուշութեամբ հըսկել ընդդէմ նորա, և չտալ տեղի բնաւ, ապա Թէ ոչ ամենայն ջանք մեր 'ի մերժել զայն՝ ընդունայն լինին։

Փոփոխումն երեւակայութեան և մտաց այնչափ օգուտ է առողջութեան, որչափ փոփոխութիւն տեսարանաց յաչս 'ի բերկրութիւն հոգւոյ և մարմնոյ. քանզի յորժամ միտք կամ երեւակայութիւնն յարեալ կայ միշտ առ առարկայ մինչ, յատկապէս եթէ իցէ այն անհաճոյ և տրտմալի, վնասէ ամենայն կենդանական զօրութիւն մարմնոյ, որով և պատճառի անմարսութիւն, պակասութիւն ախորժակի, տկարութիւն ջղաց, վրացաւութիւն աղեաց և ապականութիւն հիւթոց։ Որոց միտք վհատեալ է վշտալի տրտմութեամբ, անհնար է նոցա վայելել զառողջ և անցաւ կեանս։

Ով, քանի՞ քանի կորովի և գեղեցկայարմար կազմուածով անձինք Թէ 'ի տարաբաղդութենէ ընտանեաց, և Թէ 'ի ձախող մինչ դիպուածոց ըմբըռնեալ յանհնարին տրտմութիւնս՝ զբաւեցան 'ի կենաց՝։

Իրաւի է, զի ոչ աղատի ոք, եթէ հարուստ, եթէ աղքատ, եթէ մեծ և եթէ փոքր 'ի գերանգեալ մահուան. բայց ով ոք ցանկայ վայելել զերկար կեանս, չափաւորեսցէ զկեցութիւն իւր, և կեսցէ միշտ խնդամիտ և ուրախ, որ ուեալ զինքն 'ի գործունեայ զբաղմունս։

Թէև չէ ոք աղատ յայս կրից, կամ կարող մերժել յինքենէ զայն, բայց բարեխառնութիւն մտաց և գործունեայ զբաղմունք օգնեն մեզ, 'ի չափաւորել զտրտմութիւն մեր, առ 'ի զերծ մնալ 'ի նարին բուռն ներգործութենէ վնասու առողջութեան. քանզի 'ի ձեռս մեր է և կախի 'ի կամս մերոց։ Եթէ ցանկամք ընտրել ուրախ և զուարճաբար ընկերակցութիւնս, կամ զբաղեցուցանել զմեզ 'ի զբօսալի տեսարանս և 'ի գործունեայ խաղս. եթէ երթամք յօտարութիւն, կամ պարապիմք յարուեստ մինչ գիտութեան, 'ի գրել կամ յընթեռնուլ զայնպիսի մինչ, որ գրաւէ

միանգամայն զուշադրութիւն մեր. եթէ նատեալ 'ի խորշ տան թաղծութեամբ և տրտմութեամբ անցուցանեմք զկեանս մինչեւ 'ի մահ, յամենայն ժամ 'ի կամս մեր է ընտրել զբարին և 'ի բաց կալ 'ի չարէ։

Իսկ չար քան զամենայն է, զի տարաբաղդք ոմանք յորժամ ըմբռնին 'ի տրտմութիւն ինչ, տան զինքեանս արբեցութեան, կարծելով թէ այսուիկ գտցեն զդիւրութիւն ցաւոյն, զի այս առաւել վնասակար է քան զայլ վնասանգաւոր հիւանդութիւնս. զի յաւելու ընդ տրտմութեանն նաև զկորուստ ընչից և ստացուածոց, և աւեր անուան, պատուոյ և կենաց։

Սէր։

Սէրն, ըստ փորձոյ, է հզօրագոյն քան զամենայն կիրս. զի յորժամ սաստկանայ, չիք առարկայ ինչ, ոչ միտք, ոչ կամք կամ խիստ բռնութիւն, զի կարիցեն սանձել զայն։

Երկիւղ, բարկութիւն և այլ կիրք են վասն պահպանութեանն հատին, այլ սէրն է վասն շարունակելոյ զտեսակս. վասն որոյ իրաւամբ ասի թէ՝ արմատ սիրոյ է խոր 'ի սիրտ մարդկան։

Թէև սէրն կարի զօրաւոր է, բայց չէ այնպէս երագընթաց, որպէս բուռար զբարկութենէ և զայլ կրից. քանզի սակաւք 'ի միում նուագի անկանին յանդգնս սէր ինչ. վասն որոյ ամենայն օր պարտ է քաջ զմտաւ ածել, և նախ քան զնուաճիլն իւր 'ի սիրոյ բարեպէս դիտել հաւանականութեամբ, եթէ կարող իցէ ժառանգել զառարկայն ցանկութեան իւրոյ. բայց երբ կարծիցէ թէ անհնար է, փութասցի 'ի բաց կալ յամենայն պատճառաց, որոց հնար է առաւելուլ զընդունայն սէր իւր, այսինքն՝ առժամայն փախչիլ յընկերակցութենէ սիրական առարկային և զբաղել զմիտս 'ի գործ կամ յուսումն ինչ և զհետ լինիլ պէսպէս զբօսանաց և խաղուց, կամ գուն գործել գտանել զայլ առարկայ սիրոյ, զոր հնար իցէ նմա 'ի ժառանգել։

Զիք կիրք, առ որ մարդիկ այնչափ հակամիտեալ են, որչափ առ սէրն. բայց և չիք այլ կիրք այնչափ վտանգաւոր և վնասակար, որչափ սէրն, յորժամ չէ որբազան։ Զի ոմանք առնեն ըզսէր լոկ վասն զբօսանաց, և ոմանք եւս 'ի զեղծ բաղձանաց, որք բաղում անգամ հրապուրեալ զգեղեցիկ՝ խոյտառակեն զհամեստութիւն և զպատիւ նոցա, որ է անտանելի անօրէնութիւն արժանի ամենայն դատապարտութեան։

Ի փորձառութենէ յայտ է, զի ո՞ր ում մեք անձկանօք ցանկամք. նմին և դիւրաւ նուիրեմք զհաւատ մեր։ այսպէս և ոմանք 'ի դիւրահաւան գեղեցկաց պատրեալ 'ի կեղծեալ սիրոյ, բաղում անգամ անկանին յայնպիսի դառնաղէտ վիճակ, որ խիստապէս ցաւալի է, զի այսպիսիք կուրացեալ 'ի սիրոյ՝ ոչ որոշեն զպատրուակեալ սէրն յիսկականէն, այլ 'ի բանիլ ուշացն՝ տեսանեն զինքեանս անկեալ յանելանելի չարիս։

Յորժամ սէրն ժամանէ 'ի ծայրագոյն աստիճան, չիք նմա այլ դարման, բայց միայն ժառանգել զսիրեցեալ առարկայն. վասն որոյ պարտ է իւրաքանչիւր ումեք յամենայն ժամ ջանալ յաղթել սիրոյ։

Զգուշութիւն ծնողաց յընտրել զաւակաց զամուսնական վիճակ, բաղում անգամ նախատելի է յոյժ։ Զի նպատակ ծնողաց է միշտ առ բարեպատեհ հարանցուս. մինչ զի զաւակունք իւրեանց բաղում անգամ չար

չարին լաբրեալ զՀշմարիտ նահատակ 'ի մէջ հակամիտութեան սիրոյ և ծնողական պարտուց։

Զլեալս մտադրութիւն ծնողաց անօրինելոյ զամուսնութիւն զաւակաց, է հաւատել զյաժարութիւն և միտումն նոցին առ ընտրեալն։ Իւուր ըստ արժանւոյն փոյթ տարցի այսմ, անդ յոյժ ոակաս ընակիցք ապերջանիկ լինցին. և եթէ տարաբաղդաբար դիպեսցի նոցա ձախող վիճակ կամ կորուստ բարոյական բարուց և համբաւոց, այսր ցաւեսցին ծնողք, բայց ամենայն իրաւամբ ազատ լինցին 'ի մեղադրանաց խստութեան։

Կրօնաւորական Խաղ-ոլիան։

Խաղումք 'ի կրօնաւորական դասուց մոլորեալ յանհեթեթ կարծիս, ուրախ լինելն համարին անտանելի մեղք ինչ, զի երեւակայեն՝ կրօնաւորութեան կայացեալ գոլ 'ի կարի խստամբեր կեանս, 'ի հրաժարման հաճելոյ զկամս, եւս և կարի անմեղ զբօսանօք։ Ով, որպիսի թախծանք սիրոն 'ի դէմս նոցա, յորժամ միտք նոցա վարանեալ են 'ի բաղմայոյզ խորհուրդ սոսկալի մեղաց։ Օ, 'ի ամենայն գեղեցիկ նպատակ յաջս նոցա են անպիտան ինչ, և ամենայն զուարճալի տեսարան բնութեան երեւին նոցա սարսափելի։ Զկնք ինչ բերկրալի առարկայ, որ չէ նոցա գարշելի. և ոչ չքնաղագեղ կերպարան և քաղցրանուագ ձայն, որք չեն նոցա զզուելի. կեանք նոցա է դառն և անտանելի բեռն մի, զի ապերջանիկ թշուառականքն կարծեն թէ չկնք այլ ծանրագոյն մեղսամած չարիք, քան զոր ինքեանք զդան և կրեն, որք և բաղում անգամ յուսահատեալ՝ կրսեն զթել թշուառ կենաց իւրեանց։

Ով, կարի դառն է և ցաւալի յոյժ եթէ կրօնասիրութիւնն խոտորեսցի ցայն աստիճան՝ յորմէ ծնանիցին այսպիսի անտանելի չարիք. մինչդեռ կարդեալ է այն հոգեւոր դեղ բժշկութեան ամենայն ցաւոց և մխիթարիչ ամենայն տրտմութեանց. քանզի չկնք ինչ դերագոյն բարի առ բարբութիւն մարդկան, քան զՀշմարիտ կրօն ուղիղ աստուածպաշտութեան. զի ամբառնայ զմարդ, որ ուխտիւք նուիրեալ է նմա զանձն իւր, 'ի վեմութիւն մտաց և 'ի քաջալերութիւն վշտաց և անձկութեան սրտի, եթէ երբեք դայցեն 'ի վերայ։

Կրօն Աստուածպաշտութեան ուսուցանէ մեզ, թէ աներկմիտ հաւատով և համբերութեամբ տանիլն նեղութեան, վշտաց և տառապանաց՝ է հանդերձիչ երջանկութեան հանդերձեալ կենաց, և որ անխոտոր մնացէ 'ի շարիղ այսր առաքինութեան, ժամանեսցէ առ կատարեալ երանութիւն յաւիտենական կենաց։

Որոց կարդեալ են 'ի պաշտօն քարոզելոյ մարդկան զաստուածպաշտութիւն, պարտին ամենայն զգուշութեամբ 'ի բաց պահել զոք 'ի կարի մթին և յառապար ճանապարհէ. զի մի խոտորեալ նորա անկանիցի յանեղանելի խորխորատ կորստեան. զի խաղաղութիւն սրտի և անդորրութիւն մտաց, որ է ազդումն Հշմարիտ աստուածպաշտութեան, է առաւել զօրաւոր ձեռնարկութիւն 'ի յօժանդակել հաւատացելոց զբարիս՝ քան 'ի յուսցանել զահ և գերկիւղ դատապարտութեանէ մեղաց։ Հշմարիտ է, զի հնար է ահիւ և երկիւղիւ երկեցուցանել զոք 'ի բաց կալ յերեւելի չարեաց. բայց ոչ ազդէ 'ի սիրտն բնաւ Հշմարիտ սէր Աստուծոյ, զի Հշմարիտ սէր Աստուծոյ կայանայ 'ի Հշմարիտ

մարդասիրութեան, յիրաւախոհութեան, յարդար կամս, 'ի հեղս և 'ի խոնարհս։

Այս ողորմելի վիճակ է և նոցին որք ըմբռնեալ են 'ի ջղային ախտ և 'ի սեւամաղձային թաղծութիւն. որոց չեք այլ բարեգոյն միջոց կամ եղանակ ընդդիմանալոյ այլ և այլ կրեց յիշատակելոց 'ի վերս բայց միայն պահել զմիտս 'ի խորաշնին հեատաղօտութեան պիտանաւոր իրաց, կամ կրթել զլինքն և առնուլ զաւարձալի ըղբօսանս և զդործունեայ զբաղմունս, որպէս գրեցաք զտրամութենէ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Հասարակ արդարոութեան մարմնոյ

Հասարակ արտաքնորութիւն մարդկային մարմնոյ են այսոքիկ, մաքրութիւն որովայնի, միզութիւն և քրտունք.

Յայսանէ, եթէ մին և եթէ միւսն յորժամ ընդ երկար մնասցէ 'ի մարմնի, պատճառեսցէ վնաս առողջութեան, այսինքն թթուածութիւն. կծուածութիւն, փքածութիւն, նեխութիւն, և այլն, զորոց խօսեցուք առանձինն.

Մաքրութիւն որովայնի։

Ոչինչ այնչափ օգտէ առողջութեան, որչափ պահել զանձն կանոնաւոր։ Յորժամ կղկղանքն մնասցեն ընդ երկար յաղիս, ապականին հիւթք մարմնոյ, և յորժամ արձակեսցին կարի փութով, մարմինն պակասի 'ի զօրութենէ սննդեան, զորս 'ի կանոնել պատշաճապէս՝ հարկաւորի 'ի կանոնել զկերակուրն, զնչելն և զբաղխաւորապէս զկրթութիւնն։ Քանզի յորժամ մարմինն է յանկանոն դրութեան, ոչ մին և ոչ միւսն կատարէ զնուր գործադրութիւն ըստ պատշաճի։

Որք ուտեն և ըմպեն յանկանոն ժամու, կամ որք ուտեն զանազան տեսակս կերակրոց, և ըմպեն զպէս-պէս զօրաւոր հեղուկս յամենայն ճաշու, մի ոմն ունիցին երբեք եթէ նոցին մարսողութիւնն բարւոք իցէ և մաքրութիւն որովայնին կանոնաւոր լիցի։ Զի անկանոն ուտելն և ըմպելն խանգարեսցէ զամենայն կենսական զօրութիւն մարմնոյ, որով պատճառին պէսպէս հիւանդութիւնք։

Կարի շատ և կարի նուազ կերակուրն ունի միշտ վնասակար ներգործութիւն. քանզի կարի շատ կերակուրն պատճառէ որովայնալուծութիւն, և կարի նուազն՝ պնդութիւն. որովայնի. երկուքն եւս վնաս են առողջութեան։

Կարի դժուարին է 'ի հաւասարել զճիշտ թիւ մաքրութեան որովայնի, որ լիցէ պատշաճ առողջութեան, յաղագս տարբերութեան հասակի և կազմուածոյ մարդոյ. կամ թէ գուցէ 'ի մի և նոյն հասակի և 'ի կազմութեան՝ այլ զանազան 'ի կեցութիւնս, այսինքն կելով միշտ զդոյշ և չափաւոր 'ի կերակուրս և փոյթ առ կրթութիւնս։ Միայն վասն չափահասից հասարակապէս յաւուրն միանգամ բաւական է. զի աւելի կամ պակաս քան զմին է նշան անառողջութեան։

Այս ընդհանուր կանոն ընդունի զբացառմ ընդդիմութիւնս, քանզի են որք ոչ ելանեն արտաքս աւելի քան միանգամ 'ի շաբաթն, բայց վայելեն զկատարեալ առողջութիւն. սակայն մինչեւ ցայս աստիճան կոր-

գութիւն որովայնի չէ խոպան անվանագ, այլ թէ առ ժամանակ ինչ վայելեսցեն զչափաւոր առողջութիւն այլ 'ի վերջոյ գուցէ գացեն զպէսպէս հիւանդութիւնս, այսինքն անմարսութիւն, կորուստ ախորժակի, ուռոյց ոտից, և այլն։

Յաջողակ միջոց կարդաւ արտաքս ելանելոյ յամենայն աւուր՝ է յառնել 'ի քնոյ առաւօտուց, և առնուլ ըզկրթութիւն 'ի բաց օդի. քանզի մինչև յանկողնոջ ընդ երկար, ոչ միայն արգելու կանոնաւոր մաքրութիւն որովայնի, այլ և ջերմութիւն անկողնոյն յորդելով զքրտունս՝ նուազէ զայլ արձակմունս։

Ոմանք առ 'ի դիւրել զպնդութիւն որովայնի՝ սովոր են առնուլ զլուծողական դեղորայս. քայց այս սովորութիւն բաղում անգամ աւերէ զկաղմուածնոցին. քանզի լուծողական դեղն ստէպ 'ի կիր առեալ՝ նուազէ զաղիս և զմարսողութիւն. և յիւրաքանչիւր նուազառեալ դեղն՝ բանայ զհանապարհ վասն միւսոյ և 'ի վերջոյ պարտաւորին առնուլ զայն յամենայն օր իբրեւ զհանապազորդական հաց։ Այլ բարեգոյն է այսպիսեաց բառնալ զպնդութիւն որովայնին կերակրով քան դեղով, այսինքն.

Նախ՝ պատրաստ կալ յամենայնէ, որ ունիցի զպնդողական կամ ջերմ բնութիւն. և երկրորդ՝ զդենուլ ըզնուրբ և զդամուտ զդեստս։

Կերակուր նոցա լիցէ եփեալ կամ խորովեալ ինձոր կամ տանձ, շլոր, չամիչ, եւս կարագ, մեղր, շաքար, արգանակ ընդ զոմենի կամ այլ կակղացուցիչ դալարեաց, և պէսպէս դալարիք և դիւրամարս պտուղք։ Իսկ ըմպելիք նոցա լիցի լոյծ բնութեամբ, այսինքն հում կաթն կովու, շիճուկ կաթին, շաքարաջուր, և այն, այլ բնաւ մի՛ ըմպեսցի ցրի մադերա, պօրտոյ և կարմիր գինի, այլ միայն թեթեւ և չափաւոր գարեջուր։

Այլ այնոքիկ որք նեղին 'ի ըստէպ լուծմանէ որովայնի, պարտին յարմարել զկերակուր իւրեանց ըստ օրպիսութեան գանգատանացն. այսինքն 'ի կիր առնուլ զայնպիսի կերակուրս, որոց լիցէ զօրութիւն պնդելոյ և կարողացուցանելոյ զաղիս, որք են՝ ապիտակ և լաւ եփեալ հաց, պանիր, պինդ խարշեալ ձու և կաթամբ եփեալ որիզ։ Իսկ ըմպելն նոցա լիցէ պօրտոյ և կարմիր գինի, սակաւ ինչ բրանդ խառնեալ ընդ ջրոյ։

Այս ստէպ լուծողութիւն բազում անգամ արգելու զքրտունս, որ վնաս է լուծողութեան, վասնորոյ հարկ է զգենուլ զջերմ և զքրտնաբեր զգեստս։

(Շարունակելի։)

Մեր բազմերախտ Թարգմանիչ սուրբ Հայոց վրայ գրուած սոյն ոտանաւորը՝ թէպէտ նոցա անուան յիշատակի օրը սուրբ Աթանասոս ուսումնարանին մէջ կարդացուած և մեզ յանձնուած էր հրատարակելու համար, բայց կարեւոր նիւթերու յաճախութիւնը պատճառ դարձաւ մինչ ցարդ յետ մնալուն. այլ երախտագէտ սրտի արդիւնք լինելուն համար արժան կը համարիմք այժմ թէ ուշ հրատարակել։

Ի ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻՉՍ ՄԵՐ ՍԱՀԱԿ ԵՒ Մ'ԵՍՐՈՎԲ

ԱՌ ՀՐԵՇՏԱԿՆ ՄԱՍՍԵԱՑ

Ա. Պարն.— Ուստի Սերունք դու զուարթուն
Գաս խրախամիտ թեւատպար.
Զի'նչ 'ի Մատեաց, ոգիդ անքուն,
Ունիս նոթձեալ մեզ այսօր։

Ոն Ա. Պարոնէն.— Եկայք մանկունք Հայկեան զարմիս,
Ջերմ սէր 'ի սիրտ յակումբ տանիս։

Բ. Պարն.— Ուրդեք եմք մեք Սուրբ Գրիգորի,
Արթուն հովուին հսկողի.
Խուն ինչ առ մեզ ճն հաճեսջիր
Յաւպաղել արդ վայրիկ մի։

Այլոն Բ. Պարոնէն.— Ընձկայրեաց եմք ըսել յօժար
Քոյին ձայնի սիրաւառ։

Ա. Պարն.— Սա՛ մեզ բան, հրեշտակ սիրուն,
Ըղտարագիր հեգ Հայոց,
Կրնե՞ն արդեօք ղոգի սուրբ Հարց,
Վեհ Սահակայ Մեսրոբեայ։

Ոն Ա. Պարոնէն.— Սահակ Մեսրոբք մեր բարերարք,
Ազգանաղեան տոհմիս են փառք։

Բ. Պարն.— Օրոց անմահ ըղձիշատակ
Խմբեալ տանեմք մեք այսօր.
Ի՞նչ եւ առ տխուր շնորհք
Տօնակատար Հայ սիրտ ոք։

Այլոն Բ. Պարոնէն.— Երախտագէտ են սիրոք Հայոց,
Ուր թէ չնցե չիջեալ այն բոց։

Ա. Պարն.— Ո՞ր ապաշնորհ այն ինչ Հայ,
Որ ոչ 'ի սիրտ դրոշմեսցէ
Զանմահ անուն վեհիկ Սրբոց,
Բարերարաց Հայ ազգիս։

Ոն Ա. Պարոնէն.— Օրհնեալ են միշտ Սահակ Մեսրոբք,
Օրհնեմք յաւերժ սիրաբորբք։

Օրատրիոնն.— Օրհնեալ էք եւ դուք,
Ո՜ Հայկայ Մանկունք.
Օրհնեալ որ ղգայք
Ըզսէր անապակ։
Ազգ ձեր տարագիր
Կան հետոքրքիր.

Ձեր մինան երկոց
Կրթել խայրիս հոծ։
Գայլք յամեն ուստեք
Մտեալ 'ի փարախ՝
Գիշատեն զանմեղ
Գառինս ձեր, աւաղ։

Օն տօնեցէք սիրով սուրբ գիշատակ ձեր Նախնեաց,
Եւ գրոշմեսցի խոր անեղծ 'ի ձեզ անուն վեհազանց.
Նմանելով դուք նոցա՝ գործոց, վարուց, հաւատոց,
Փութով օգնեք Ձեր Ազգին, որ հառաչէ խոր հոգւոց։

Բ. Պարն. — Կարդաց ահա զիւր պատգամ,
Բանքեր զուարթունն եւ գընաց.
Օ՛ն փութասցուք եղբարք իմ
Միսել արագ ձեռն 'ի գործ։

Այլոն Ա. Պ. Ա՞ՐԳ. Սուրբդ Սահակ եւ Մեսրովք,
Ձեզ ներքողից արգադիր
Հիւսք պսակաց ձօնեսցուք.
Ըզձեր ջանից անդին ձիր,
Հռչակ դարուց մեք հարցուք։

Ա. Պարն. — Լուսապայծառ Մասսեաց Արփիք,
Ձերոց շաւղաց եմք հետամուտ.
Օ՛ն մեզ օգնան լինել արիք,
Յայս մեր հանդէս ճեպեցէք փոյթ։

Որն Ա. Պարոնէն. — Ո՛վ սուրբ Սահակ եւ Մեսրովք,
Որ 'ի խորանքս լուսաձեմ
Հսկէք արթուն 'ի սէր սուրբ,
Զանմահն ընդ մեզ հաշտեցուցէք՝
Աղերսարկու կացեալ միշտ։

Բ. Պարն. — Ձերով շնորհիւ դեր զգօն հարք,
Ազգ մեր թշուառ գտաւ արժան
Ի ձեր ճգանց ընդունիլ լոյս.
Ըզտառս անդին տոհմիս Հայկեան։

Այլոն Բ. Պարոնէն. — Ձեզ եմք յաւետ շնորհապարտ,
Ո՛վ սուրբ Սահակ եւ Մեսրովք.
Ձեզ ներքողից արգադիր
Հիւսք պսակաց ձօնեսցուք.
Ըզձեր ջանից անդին ձիր
Հռչակ դարուց մեք հարցուք։

Ա. Պարն. — Բ՞ստ արժանի անշուշտ ձերոց
Անխոնջ ջանից 'ի սէր Ազգին

Ըղտրիտուրն ընկալայք հոծ
Յանանց 'ի փառս Ողիմպոսին։

ՈՓ Ա. Պարո-էն. — Յերախտագէտ ղգայմանց
Եւ մեք շարժեալ սիրազգած,
Ըղյիշատակ Ձեր անուանց
Ասա կատարեմք անմոռաց.
Օրհնեալ էք միշտ Հարք հարանց։

Բ. Պարն. — Ի լուսափայլ եթերին կոյս
Անճառ լուսով վեհ բարձրելոյն
Գեղազարդեալ պճնիք 'ի փառս,
Ծծէք զանմահ ըղկաթն հոգւոյն։

Այլ ոմն Բ. Պարո-էն. — Օրհնեալ Մեսրոպք եւ Սահակ,
Որ առ շնորհացն աթոռով
Կայք աներկիւղ համարձակ,
Անկցին 'ի մեզ Ձեր գորով՝
Ժառել շնորհս վասն մեր։

Ա. Պարն. — Հայցեմք 'ի ձէնջ մեք սիրավառ՝,
Հայեցարուք յայս հարկ խոնարհ.
Յոր համերամ վեհք եւ մանկունք՝
Ի մի ժողով կամք գումարեալ։

ՈՓ Ա. Պարո-էն. — Կամք եւ օրհնեմք զՁեր անուն,
Նախանձաւոր Ձեզ եմք համբուն։

Բ. Պարն. — Ի յիշատակ անմահ երկոցդ
Կոթող 'ի սիրտ կոփեալ կանգնեմք,
Որ անտեղծ կացցէ անդէն
Դարուց 'ի դարս միշտ անյողդողդ։

Այլ ոմն Բ. Պարո-էն. — Օրհնեալ Սահակ եւ Մեսրոպք,
Դեմք 'ի ժպիտ սիրտ 'ի տրոփ,
Ըղձեղ գովեմք համախուռմբ։

Ա. Պարն. — Տո՛ւք մեզ ոգի 'ի Ձեր ոգւոց
Լինել արժան Ձեզ Հարցդ որդիք,
Ըղձեր աւանդ տառից սրբոց
Բազմաբեղուն առնել կամիմք։

Մի հանամոռ. — Ձեզ եմք յաւէտ շնորհապարտ,
Սուրբդ Մեսրոպք եւ Սահակ.
Ձեզ ներբողից դրուատիք
Հընչեսցեն մեր դայլայլիկ։
Ձերոց քրտանց ձօն քաղցրիկ,
Առնեն ըղմեզ երջանիկ.
Բարերարաց եմք որդիք,
Լիցուք եւ մեք միշտ բարիք։

Կ. Յ. Մարիոսեան։

ՀԱՏԸՆՏԻՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ

Մեն անհատի մէջ զարգացնել այն կատարելութիւնը, որուն ընդունակ. այս է ահա դաստիարակութեան նպատակը։

Կատարեալ մարդը նա է, որ կ'ապրի կրօնական և բնական կեանքով, միանգամայն և կը յառաջէ 'ի Հանապարհի Աստուծոյ և բնական լուսոյ։ Կրօնական և բնական լոյսը մարդկան մէջ վառելու և ծաւալելու համար՝ հարկաւոր է դաստիարակութիւն, և դաստիարակութիւնը մայրական անժըլատելի ազդեցութենէն կախումն ունի։ Այսն զի դաստիարակութեան սուրբ կանթեղը պէտք է որ նախ մանկան որրանի մօտ վառուի և ապա դպրոցներու մէջ։

Երկրին օգնելու և ժողովուրդը վերականգնելու համար՝ ոչ թէ թագաւորները և թագուհիքը կոչելու է, այլ մայրական ազդեցութիւնը և ապա վարժարաններն ու համալսարանները։ Այսն զի մօր ազդեցութիւնն է, որ կը ներդործէ սրտի վրայ, և սրտի ուղղութեամբ է որ կ'ուղղուի միտքը. և ահա ժողովուրդն եւս փրկուելու և նորոգուելու համար՝ ուրիշ կարօտութիւն չունի, եթէ ոչ ուղղութիւն սրտի, ուղղութիւն մտաց։

Դաստիարակութիւնը պէտք է որ երեւի ընտանեաց մէջ, ինչպէս պարտաւորութիւնը Սպարտայի և հայրենասիրութիւնն Հռովմայ մէջ։ Եթէ հայրենասիրութիւն հերոսներ և դիւցազուններ կը ծնանի. ճշմարտութեան սէրն եւս կը ծնանի ըստ աւորութիւն հանուր մարդկութեան։

Դաստիարակութեան մէջ ծածկուած է մարդկային ազգի երջանկութեան և կատարելութեան խորհուրդը։

Դաստիարակութեամբ կը մեծնան մեր մտածմունքներն ու խորհուրդները և կը սրբին մեր կիրքերն ու յօժարութիւնները. հանճարը կը ճառագայթի մեր մտաց մէջ, առաքինութիւնը՝ մեր կամաց մէջ և սէրը՝ մեր սրտի մէջ։ Եւ ահա սոյն կեանքն է մարդոյ ճշմարիտ կեանքը, հոգին է մարդն, մնացածն ոչինչ է։

Դաստիարակել և զարգացնել հոգւոյ կարողութիւնքը. ահա այս է մարդկութեան միակ և ճշմարիտ շահը, որ թագաւորին կարեւոր է՝ իւր գահոյից վրայ, գործաւորին՝ իւր աշխատանաց մէջ, եկեղեցականին՝ իւր պաշտօնին մէջ, ժողովրդին՝ իւր ամեն տեսակ գործոց և ընկերական կենցաղավարութեան մէջ։

Բանականութեան կարողութիւնքը կ'ազատին մեր աշխատանքով, հոգւոյ զգացումները՝ մեր կամքով, իսկ երկրաւոր ցանկութիւնքը՝ մեր թուլութեամբ։ Ուստի հաստատուն կամքն ու աշխատանքն են, որով կարող ենք յաղթել ամեն բանի, ինչ որ անարժան է մեր մարդկութեանը։

Դաստիարակին երկու մեծ պայմաններ պէտք են — Սիրել և Աշխատիլ. սիրել մանուկները՝ Քրիստոսի նման և իւր ամեն կարողութեամբ աշխատիլ նոցա բարոյական և մտաւոր զարգացման համար։ Այսն ահա այս է դաստիարակութեան բոլանդակ կանոնը։ Որչափ դիւրին են սիրոյ համար առաքինութիւնները, որչափ գեղեցիկ են զոհողութիւնքը։ Ով որ սիրել գիտէ, նա զօրաւոր է. ով որ սիրել գիտէ, նա սուրբ է. ով որ սիրել գիտէ, նա ամենայն ինչ կարող է գործել, ամեն նեղութիւն կրել և ամեն զրկողութեան համբերել։

Ամեն ուսանող և ուսուցանող մարդ՝ մեծ է։ Ամեն իւր ոյժը և կարողութիւնը գործ դնող մարդ՝ զօրաւոր է և անպաղթ։ Բայց այն եւս պարտինք գիտել, որ Աստուծոյ հետ միանալով միայն մեծ ենք մենք. իսկ Աստուծմէ բաժնուած ժամանակ՝ ոչ ինչ։

Աւետարանը իւր աշակերտները աղատեց ճշմարիտ լուսաւորութիւն ուսուցանելով, դաստիարակութիւնն ու տպագրութիւնը կարող են աշխարհը ազատել Աւետարանի լոյսը ծաւալելով և պաշտպանելով։

Ճշմարտութեան գիտութիւնը բաւական է միայն մարդը երջանկացնելու համար։

Օձնքով և արիւնով գնուած ամեն փառք ունայնութի է և ցնորք։ Այսպէս են փառք Կեսարներու, Նաբոլէոններու, Կիսմներու և այլոց։ Իւր դաստիարակութեամբ ու կրթութեամբ ստացած փառքն է միայն ճշմարիտ փառք։ Ով որ մարդկութեան հոգին կը զինուորէ, նա մեծ գործ կը գործէ. իսկ ով որ մարմինը կը զինուորէ Չինգիսխանի և Ենկիթմուրի փառք միայն ժառանգել կը ձգտի։

Մի ազգ կամ ժողովուրդ լուսաւորուելով միայն կը մեծնայ և ոչ թէ մարդկային արեան հեղեղներ թափելով։ Ազգեր կան, որ իրենց ապագայն ապահովելու համար՝ իրենց զօրագունդները և թնդանօթները կը հաշուեն։ Բայց էական ապահովութեան համար, հարկ է զինել, հարկ է հաշուել՝ թէ ազգ մի քանի լուսաւորեալ մարդ ունի. վասն զի երկրի և ազգի ճշմարիտ զօրութիւնը մարդն է, դաստիարակեալ և կրթեալ մարդն։

Ամեն երկիր, որ չը յառաջեր կրթութեամբ, յետս կը դառնայ։ Անանց լուսոյ՝ ազատութիւնը անիշխանութիւն է։ Անանց ազատութեան՝ լոյսը ճնշումն է։ Կայ մարդկութեան դաստիարակութիւն, կայ մարդոց դաստիարակութիւն։ Մարդկային ցեղը պարտ է հաստատուն քայլերով յառաջադիմել դէպ 'ի մի ամենամեծ կրթութիւն, դէպ 'ի մի ամենամեծ ազատութիւն։ Ընդհանրին է անհատի ազատութիւնը բռնաբարել, առանց ընդհանուրի ազատութիւնը բռնաբարելու։ Վասն զի ազատութեան իրաւունքը հասարակաց է. և եթէ այսպէս չը լինէր, իրաւունք չէր լինիր, այլ արտօնութիւն կամ՝ առանձնաշնորհութիւն։

Ով որ կը ցանկայ ճշմարտապէս ազատ լինիլ, իւր զօրութիւնը ճշմարտութեան վրայ հիմնելու է։ Ամեն մարդիկ կը պատերազմին, և եթէ հաւասար զէնքով անգամ պատերազմին, մենք կը հաւատանք, որ յաղթանակը ճշմարտութեան կողմին պահուած է։

Ճշմարտութիւնը վարագուրող խաւարն է մեր կիրքը և սնոտիապաշտութիւնը։ Այս խաւարը փարատելու համար՝ կրթութիւն և դաստիարակութիւն պէտք է։

Ազատութեան վերջնագագաթը հասնելու համար՝ զինուց արգասիք ազատութիւնը արհամարհելու և դաստիարակութեան արգասիք ազատութիւնը ձեռք բերելու է։

Մարդկային ամեն տարութիւններէն տխուրը հոգւոյ թմրութիւնն է։ Այդ այն մարդուն, որ կ'անցնի աշխարհէս, առանց արթննալու։ Երանի այն մարդուն, որ իւր բոլոր կարողութիւնը կը նուիրէ թմրած հոգիները զարթուցանելու և զօրացնելու համար։

Թմրած երկրագունդի վրայ իմաս-

տուն դատախարակներն են այն ջանքերն, որոց ըստ յարմնութիւն կը կոչէ բոլոր մարդկութիւնը։

Մարդիկ տակաւին այնչափ խեղճ և ողորմելի են, որ արձաններ և կոթողներ կը կանգնեն գիշատողներու և մարթողներու համար, և կը մոռանան այն բարերարները, որոնք կենդանութեան շունչ կը փչեն անկենդան թմրածներուն։

Ոչ բանտ, ոչ կախաղան, ոչ օրէնք, ոչ պատիժ կարող չեն աշխարհիս ոճիրները և անօրէնութիւնները վերցընել և հեռացնել, այլ միայն բարի դատախարակութիւնը։

Այն ժողովուրդը կամ ազգը մահ չունի, որ իւր վարքը և մեծութիւնը կրթութեան մէջ կ'որոնէ։ Այս պիսի ժողովրդի համար մի կանոնաւոր դպրոցը նախապատիւ է բազմաթիւ զօրանոցներէ. վասն զի, զինավարժութեան հիմնադիրն է մարդասպանութիւնը, իսկ դատախարակութեան հիմնադիրն է մարդոյ բարեյական և մտաւոր կենդանութիւնը։ Մ'ոյն կէս նպատակին է մահը, իսկ միւսոյն՝ կեանքը։

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՆԱՆՑ

Իգական սեռի դատախարակութեան խնդիրը, որ, իւր կարեւորութեամբ, խոհուն մտքերը գրաւող խնդիրներէն գլխաւորն է, քանի մի տարիէն ի վեր, մեր Ազգին մէջ բանախօսութեան և գրութեան նիւթ եղած է։ Գովելի ամէն մարդիկ, որոնք սոյն խնդիրը կը յուզեն, թէ և տարբեր կարծիքներով, և երբեմն տրհաս խորհրդածութեամբ, արժան կը համարինք հետեւեալ Պէնէֆօսոֆիկ-նը հրատարակել, որ 7 տարի առաջ խօսուած է Սիւնեաց աշխարհի Գ. բարբաջու Մարիամեան Դպրոցի բացման հանդիսի օրը, Ի ներկայութեան երջանկայիշատակ Ս. Աւետիսեանցի (Յոհաննոս արքեպիսկոպոսի) և բազմաթիւ հանդիսականաց, արանց և կանանց։ Սոյն Պէնէֆօսոֆիկնէն իւրաքանչիւր ոք կարող է տեսնել՝ թէ որ կէտէն նկատած է բազմահմուտ հեղինակն՝ Պ. Շանչեանց՝ կանանց սեռի դատախարակութեան խնդիրը։ Եւ որովհետև ուղիղ և ճշմարիտ տեսութեամբ հեղինակուած ամէն երկասիրութիւն՝ մահ չունի, և ամէն ժամանակ կարելի է կարդալ և շահիլ, ուստի և մենք կարեւոր կը համարինք ընթերցողաց ուշադրութիւնը սոյն Պէնէֆօսոֆիկն վրայ հրաւիրել։

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ,
ՊԱՐՈՆԱՑՔ,
ՏԻԿՆԱՑՔ,

Թոյլ տուէք ինձ այսօր՝ հրաւիրել ձեր ուշադրութիւնը մի առարկայի վրայ, որ կենդանի կապով կապուած է կանանց լուսաւորութեան այս հոգեւոր տաճարի հետ, զոր դուք այսօր դուռ մարուած էք հիմնարկելու։ Թոյլ տուէք ինձ այսօր՝ խօսիլ սոյն ազդեցութեան վրայ, զոր ունին կանայք մեր կենաց վրայ և որոց ձեռքն է, ոչ միայն երեխայից ապագայն՝, ինչպէս ասաց Մ'եծն Նաբոլէոն, այլ և բոլոր մարդկութեան։

Կանանց այս ազդեցութիւնը կը կրսի մեր մանկութենէն և կը շարունակուի մեր բովանդակ կենաց մէջ։ Որքան կը յանձնէ բնութիւնն մեր կեանքը, եթէ ոչ մայրական սիրոյն։ Մարդն, որ Աստուածային Արարչութեան գարդն է, յաչխարհ կուգայ՝ ամենատկար քան համբրէն արարած,

ները։ Հազիւ թէ շունչ կ'առնու նա, կը սկսի լալու ձայն հանել։ Կարծես թէ վայր ընկած է նա մի ամենամեծ բարձրութենէ։ Նա կը ճնշուի երկրիս օդէն, շնչառութենէն և իւրնոր վիճակէն։ Լալով կ'աւետէ նա իւր գալուստն յաշխարհ, կը զարթուցանէ կարեկցութիւն. բայց նա միայն կարող է տիսիել և հանդարտեցնել նորա լացն, ով որ ճնած է ղնա ցաւով և հեծութեամբ։ Ով կարող է քաղցր ժպիտ զարթուցանել երեխայի մէջ, եթէ ոչ մայրական ուրախութիւնն, գորովն և բարեսրտութիւնն։ Ով կարող է գուշակել երեխայի հոգւոյ շարժմունքն. ով կարող է գգուել և լուսաւորել նորա խիղճն, եթէ ոչ մայրն։

Նայեցէք, թէ ինչպէս մայրն առինքն կը քարշէ զերեխայն, իւր գեղեցկութեամբն, առոյգութեամբն և առաւել քան զամենայն՝ իւր սրտովն։ Մայրական համբերութիւնը կը գոհացնէ, կը լցուցանէ երեխայի անսահման հետաքրքրութիւնը։ Մայրական սէրն կը պահէ կը պահպանէ զերեխայն ամեն վնասակար բաներէ։ Մայրական սիրով կը թեթեւնան երեխայի վրայ ունեցած անչափ հոգացողութեանց ծանրութիւնքն։ Կամաց կամաց երեխայի և մօր իրարու հետ խաղալու և խնդալու ցանկութիւնը մի նոր և գեղեցիկ կապ կը լինի երեխայի և մօր մէջ։ Ամեն բանով կը կապուին նոքա իրարու հետ, ինչպէս համաձայնութեամբ, նոյնպէս և ընդդիմութեամբ։ Լու սայն մայրական գեղեցիկ ձիրքով, որ է համբերութիւն և հրաշխղութիւն, բնութիւնն ինքնին ցոյց կուտայ մեզ յայտնապէս, թէ որքա՛ն հաւատացած է մեր մանկութիւնը, և ո՞վ է մեր երջանկութեան պատճառն։

Այո՛, Տեարք, մայրական ազդեցութիւնը կը դրոշմէ իւր կնիքը մեր սրտի զգացմանց վրայ, մեր մտաց վրայ, մեր կենաց վրայ։ Մեր հոգւոյ վրայ եղած այս մայրական ազդեցութիւնը մեր նախատահմանութիւնն է, ինչպէս ասաց Մեծն Նաբօլէոն, «Երեխայի ապագայն մօր ձեռքն է»։ Շատ անգամ կ'ասէր Նաբօլէոն, աւելի իւր մօրն է պարտական, որ իւր կենաց մէջ այնքան մեծութեան հասաւ։ Մայրական ազդեցութեան տակ զարգացած բացուած են բանաստեղծական երեւելի ոգիներ և հանճարներ—Բայրոն, Լամարթին, Ընդրէ Շէնիէ, Հիւգօ, Շիլլեր և այլք։ «Իմ մայրս տուաւ ինձ, իւր կենդանի ուրախութեամբ, ճաշակ գրութեան, ճաշակ զգացողութեան, ճաշակ բանաստեղծութեան» կ'ասէ Գերմանացի երեւելի բանաստեղծն Գէթէ։

Այո՛, Տեարք, միայն մայրը կարող է տալ մեզ բանաստեղծութիւն և հոգի բարեպաշտութեան։ Միայն նա կարող է տպաւորել մեր մէջ առաքինութիւն և ուսուցանել մեզ, որ բարի անունը նախապատիւ համարինք գանձէ և հարստութենէ, Զգի երջանկութիւնը՝ մեր անձի երջանկութենէն. սիրենք մեր ընկերները, օգնենք տարաբաղդներուն, բարձրացընենք մեր հոգին առ Աստուած, որ է աղբիւր ամենայն գեղեցկութեան և բարութեան։ Աստուածդ ինձ, ով դարձայ զսուրբն Օգոստինոս առ Ճշմարիտն Աստուած, եթէ ո՞չ իւր մայրն՝ Սրբուհին Մոնիկ։ Ով դատարակեց զսուրբն Ոսկեբերան, եթէ ո՞չ իւր մայրն։ Ով հաստատեց զկնոջայրսին Խարսեղ փրկութեան ճանապարհի վրայ, եթէ ո՞չ իւր մայրն։ Ով երեխայութեան ժամանակ Լիկեղեցի բերաւ զԱստուածաբանն Գրիգոր և Աւետարանը ձեռքը տուաւ

ջոջափելու, նայելու և սիրելու, եթէ ոչ իւր մայրն, որ կարծես թէ կը փափաքէր, կը ցանկար, որ ջոջափելով ու նայելով աստուածային հոգին իւր զաւակի ջիղերն, երակներն ու սիրտը թափանցէ։ Ով ծնաւ ու զարգացաց այն վեհ ու փափուկ Հայրենեաց զաւակները, այն առիւծի նման հզօր և գառան նման հեզ Պարդաւնանց Պահատակները, եթէ ոչ մայրերն։ Այս փափկասուն և փափկասիրտ մայրերն են, որոց զոհաբերութեան հոգին կը նկարագրէ մեզ քաղցրախօս Չլիչէն։ Այսպիսի մայրերն են, որոնք կը ներշնչեն ոչ թէ այն անձուկ հայրենասիրութիւնն, որ միայն օտարն ատելու մէջ կը սահմանափակի, այլ սէրն անսահման, որ կը ծնանի մեր մէջ այն աստուածային զգացումն, այն եղբայրական համակամութիւնն, որ Աստի բոլոր անդամ ներուն կուտայ մի սիրտ, մի հոգի, մի միտք, մի կամք։

Մինայն այսպիսի մայրերն կարող են ուսուցանել մեզ, որ մեր բնակած աշխարհէն բարձրագոյն՝ կայ մի այլ աշխարհ, մեր հայրենիքէն բարձրագոյն՝ կայ մարդկութիւն, և մարդկութենէն գերագոյն՝ մեր պաշտելու առաջին և սուրբ Իսկն՝ Աստուած։ Ով որ իւր մանկութեան ժամանակ, դաստիարակ չէ ունեցած իւր մայրն, կարող է նա, այո, սրտի բնական շարժումով բարեպաշտութեան հասնիլ. բայց նորա առ Աբարիչն ունեցած յարաբերութեանց մէջ կը պակսի, կարծես թէ, տեսակ մի ընտանեկան կապ, որ հիմն է քաղցր զգացմանց. վասն զի մայրական փափուկ զգացմունքն չէ զարթուցած նորա մէջ սէր առ Աստուած։

Եթէ աշխարհիս մէջ մի ճշմարիտ բան կայ, այն կանանց ազդեցութիւնն է մեր բոլոր կենաց վրայ։ Այս ազդեցութիւնը կ'երեւի որդիական սիրոյ և ամուսնական կապի մէջ։ Մարդը կը խորհրդակցի կնոջ հետ, կը հնազանդի իւր մօր կամքին, երկար ժամանակ կը կատարէ նորա կամքը, եւս և նորա մահէն զկնի, և իւր մօրէն ստացած համոզումներն այնպէս կ'արմատանան իւր սրտի մէջ, որ շատ անգամ կիրքերն եւս անկարող կը լինին յաղթել նոյն համոզումներուն։

Այո, Տեարք, մի երկիր կարող է փոխել իւր օրէնքները, իւր կարգ ու կանոնները. բայց մի բան կայ, որ միշտ անփոփոխ կը մնայ կենաց մէջ, այն է կանանց հզօր ազդեցութիւնն մարդկանց բարուց վրայ։ Կինը, թէ ազատ և թէ փակուած, նա միշտ կը պահպանէ իւր իշխանութիւնը մարդոց վրայ։ Այո՛ն զի, նա՝ իւր սոյն իշխանութիւնը կը ստանայ մեր սրտէն և մեր կիրքերէն։ Կանանց սոյն ազդեցութիւնն, իրենց լուսաւորութեան աստիճանին համեմատ, կը լինի շատ կամ սակաւ օգտակար, աւելի կամ նուազ արդիւնաւոր, նայելով թէ ճշգրտի յարգանք կուտան նոցա մարդիկ։ Կիները, թէ ամուսին լինին և թէ տարուկ, միշտ իրենց կը նմանեցնեն զմեզ, կամ ազատ կամ ըստրուկ։ Կարծես թէ՝ բնութիւնը կապած է ոչ միայն մեր լուսաւորութիւնը՝ նոցա լուսաւորութեան հետ, այլ և մեր յարգանքը՝ նոցա յարգանաց հետ, ինչպէս և մենք կը կապենք մեր երջանկութիւնը՝ նոցա առաքինութեան հետ։ Այս է յաւիտենական արդար օրէնքն. ուր կինն անարգուած է, այն տեղ մարդն եւս կ'ընկնի անարգութեան վիճակի մէջ. իսկ ուր կինն կ'ընթանայ լուսոյ և ճշմարտութեան ճանապարհաւ, այն տեղ մարդն եւս իւր նշանակութիւնն կը ստանայ։

Այս խօսքերս ճշմարտելու համար, դարձնենք մեր աչքերը դէպ 'ի քրիստոնեայ և ոչ — քրիստոնեայ ազգերը։ Ո՞ւր պահած է մարդն իւր պատիւն։ Ո՞ւր ծաղկած և զարգացած են հաստակութիւնք գիտութեամբ և արուեստիւ, եթէ ոչ այն տեղ, ուր կինն ամուսին է, և ոչ թէ գերի կամ ստրուկ, ուր հաստատուած է գերդասան և ոչ կանանոց, ուր կինը՝ մայր է, ուր ամուսնութիւնը՝ սուրբ կապ է և ոչ թէ ստրուկներու առուտուր։

Մարդ դու, որչափ կամիս օտարաց մօտ արդար ձեւայիր և աղքատաց մօտ՝ ողորմած, եթէ չես սեպհականեր քո կնոջդ իրեն վայելուչ յարգանքը, կարող չես հոգեկան սէր պահանջել քո կնոջմէն քեզ՝ և քո որդւոց համար։

Զրկայ այնպիսի ազգ, որ ունենայ ճշմարիտ կրօնք ու սիրէ զայն, և քրիստոնեի կանանց ազդեցութեան մեծ նշանակութիւնը։ Ճշմարիտ կրօնքը կը տարածէ լուսաւորութիւն, կը հաստատէ ամուսնութիւն, կը հաստատէ ընտանեկան կեանք, յորմէ կախեալ է ընկերական, միաբանական և ազգային կեանքը։ Վասն զի դերդաստանի մէջ միայն կը ծնին և կ'աճին բարոյականութիւն, հաւատարմութիւնք, առաքինութիւնք, միով բանիւ ամենայն մեծանձնութիւնք և արժանաւորութիւնք մարդկային ազգի։ Իսկ ընդհակառակն, ուր չը կայ ընտանեկան կեանք, ուր չը կայ ամուսնական սրբութիւն, ուր չը կայ կնոջ սուրբ ազատութիւն, ուր տիրած են բազմակնութիւն և ամուսնական անհաւատարմութիւն, այն տեղ թշուառ և անլոյս է ազգի վիճակը, այն տեղ անբարոյականութիւնը ճարակած է մարդոյ բնակարանին մէջ, այն տեղ մեռած է մարդոյ հոգեկան կեանքը։ մեռած են քաղցր զգացմունք, մեռած են խիղճն ու բանականութիւնն և թագաւորած են միայն մարմնական հեշտախտութիւնք։ Միայն ամուսնութիւնն, քրիստոնէական սուրբ ամուսնութիւնն է, որ կը հալածէ մեղքերը և կը լուսաւորէ քրիստոնէի տունը։

Կը ցանկանք և կամիք, Տեարք, իմանալ՝ թէ ամենէն աւելի ինչ է պակաս մեր Հայրենեաց ու Ազգին։— Հոգի զոհաբերութեան, հոգի մեծանձնութեան, հոգի ազգասիրութեան։ Մենք ունինք վաճառականներ և գրագէտներ, ունինք իշխաններ և ասպետներ, բայց ՄԱՐԴԻԿ՝ շատ սակաւ. և աւելի սակաւ՝ ՀԱՅՐԵՆԱՍԷՐՔ։ Այս բանիս, եթէ ոչ միակ, գէթ գլխաւոր պատճառն այն է, որ չունինք ՄԱՅՐԵՐ։ Ոչ, կան մայրեր, բայց ճնշուած են նոքա նիւթական հոգսերով, խեղդուած են նիւթապաշտ կեանքով։ Զրկան այն մայրերը, որք կարողանային դաստիարակել իրենց զաւակները Քրիստոսի հոգւոյն զոհաբերութեան և անձնուիրութեան հոգւով, սիրով առ Աստուած և առ ընկերն։ Զրկան այն մայրերը, որք կարողանային իրենց հոգեւոր ծնունդեամբ բազմացնել Աստուծոյ և Հայրենեաց զաւակներ, ինչպէս իրենց մարմնաւոր ծնունդեամբ կը բազմացնեն մարդկային ազգը։ Այդ և կին լինելու համար՝ բաւական չէ միայն լինել անտես, հրամաններ տալ ծառաներուն և աղախիններուն և հագալ միայն նիւթական բարօրութեան համար։ Պէտք են այս ամենը, բայց միայն սոցա մէջ չէ կայացած նոցա կոչումն։ Կանանց գլխաւոր կոչումն է՝ սիրել, աղօթել, մխիթարել։ Նոցա կոչումն է՝ կրթել և առաջնորդ լինիլ իրենց զաւակներուն, և այս շնորհքը յատկապէս կանայք միայն ունին և

նոքա կարող են լիովին կատարել։

Իւր մեծ կոչումն արժանապէս կատարելու և իւր ամենաղօր աղդեցութիւնն աղգի բարօրց վրայ պաղաբեր և շահաւէտ գործելու համար՝ երեք բան հարկաւոր է կնոջ — առաջին՝ | ուսաւորութիւն, երկրորդ՝ | ուսաւորութիւն, և երրորդ՝ դարձեալ՝ | ուսաւորութիւն։ Հարկաւոր է կնոջ միտքը զարդացընել գիտութեանց մէջ եւ պատրաստել իւր մարդոյ խորհրդներուն և զաւակաց ուսման մասնակից լինելու։ | ուսաւորութիւնը կապ է ամուսիններու մէջ, իսկ ապիտութիւնն արգելք։ | ուսաւորութիւնը միխիթարութիւն է. իսկ ապիտութիւնն հաղածիչ միխիթարութեան։ Տգիտութիւնը կը ծնանի հաղար տեսակ պակասութիւններ և հաղար տեսակ մոլորութիւններ կանանց համար։ Ասացէք, ինչու համար այս ինչ կինը կը մեռնի ձանձրութենէ և սրտնեղութենէ. — վասն զի զուրկ է լուսաւորութենէ։ Ինչու համար այն ինչ կինը պճնամոլ է և ունայնասէր. — վասն զի զուրկ է լուսաւորութենէ։ Ինչու համար այն ինչ կինը ունայն և չնչին բաներ գնելու համար չը խնայեր իւր մարդոյ ամսական աշխատանքը. — վասն զի զուրկ է լուսաւորութենէ, օտար է մտաւոր և բարոյական աշխարհի համար, զուրկ է իւր պարտուց ճանաչողութենէն, որպէս մարդ, որպէս անդամ Աղգի, որպէս անդամ Եկեղեցւոյ։ Կանանց կրթութեան անհոդութիւը մեր հայրերու համար աններելի էր. իսկ մեզ համար՝ անշուշտ դատապարտելի, մեզ համար, որ կը զգանք, թէ իդեական սեռի լուսաւորութիւնն աւելի նշանաւոր է քան արականին։ Ասան զի օրորոցէն մինչեւ 'ի գերեզման, կանանց աղդեցութեան տակն ենք մենք. վասն զի կը զգանք. որ կանանց լուսաւորութեան համար հոգալով կը հոգանք մեր սեպհական լուսաւորութեան համար։ Ով որ փրկարար և արժանաւոր մտքեր կը ներշնչէ կանանց, նա մի հարուածով կ'ոչնչացնէ մեր չնչին կիրքերն ու կորստական ցանկութիւններն։ Կանայք որքան գերազանց լինին, այնքան արժանաւոր կը լինինք և մեք. և երբ նոքա ըզմեզ կ'երջանկացնեն, ինքեանք ևս յայնժամ երջանիկ կը լինին։

Տիկնայք, դուք որ պատճառ էք կանանց լուսաւորութեան այս մեծ գործին (1). դուք որ այսպէս համեստութեամբ սկսաք այսքան նշանաւոր գործը, կը զգաք արդեօք, որ դուք կուտաք Աղգին նոր հոգի և նոր կեանք, այն Աղգին, որ անշուշտ անչինչ կը պահպանէ իւր սրտի խորոց մէջ ձեր անուններն ու յիշատակը։ Ասան զի, Աստուածածնի աւետման այս մեծ աւուր մէջ, աւետեցիք դուք հայրենի երկրին՝ Պարսքաստանին եւ Հայաստանին, թէ այս օրէն բացուած է հայ աղջկանց համար՝ ճանապարհ լուսաւորութեան, որ կը տանի առ Աստուած, առ Աղգն և առ ապագայ կեանքն, ցոյց կուտայ կենաց նպատակը և դէպ 'ի նոյն նպատակն դիմելու անմոլար ուղին։

Տիկնայք, դուք եւս օրհնեալ լինիք այս օրէն կանանց մէջ։ Այս օրէն Տէրն ձեզ հետ է, լուսոյ և ճշմարտութեան ճանապարհի վրայ, ուր ցանկացաք դուք հրաւիրել այս փոքրիկ աղջիկները, և որ պէտք է տանի զնոսա առ Փրկիչն մարդասէր, որ իւր քաղցր ձայնով, տան և ուրթ դար է, կը կոչէ

(1) Դպրոցի հիմնարկութեան և բացման պատճառ եղած էր 40 նուիրատու Տիկիններէ բաղկացած խնամակալութիւնն, որ կազմուած էր Պ. Շանշեանցի յորդորանօք։

մանուկներն ասելով. «Թոյլատուք մանկտւոյդ դալ առ իս, և մի արգելուք զդոսա, զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից»։

Սրբազան Հայր, Դուք, որ արթուն և անդադար ջանքով կ'աշխատիք մեր լուսաւորութեան համար։ Դուք, որ առաջին անգամ օրհնեցիք այս լուսաւորութեան մեծ գործն, ընդունելով զայն Ձեր հովանաւորութեան տակ. Դուք՝ նոյնպէս առաջին անգամ բացիք լուսաւորութեան ճանապարհը խղճալի որբոց համար, զորս այնքան սիրեց Ձեր Վարդապետն; որ զնոսն ներկայացուցիչներ ընտրեց երկրիս վրայ. Դուք ևս երկու որբ աղջկներ Ձեզ որդեգիր ընտրեցիք յանուն Ձեր Վարդապետին, որ ասաց. «Որ ոք ընկալցի զմանուկ մի այսպիսի յանուն իմ՝ զիս ընդունի»։

Բայրեր, ձեր առաջ բացուած է այսօր նոր ճանապարհ լուսաւորութեան, որ պիտի առաջնորդէ ձեզ՝ ձեր պարտաւորութիւնը ճանաչել և ձեր սիրտն ու միտքը դարձնել այս օրէն առ Աստուած, առ Աղգն և առ ճշմարիտ կեանքն, որոյ լոյսն խաղաղ է և անանց։ Դուք պարտիք ձեր աչաց առջեւ ունենալ այն բարեպաշտ կանանց պատկերները, որոց համար Փրկիչն ասաց. «Մարթա, Մարթա, դու հոգաս և զբաղում իւիք զբաղեալ ես, բայց աստ սակաւ ինչ պիտոյ է. Մարիամ մասն բարի ընտրեաց, որ ոչ բարձցի 'ի նմանէ»։

ՓՈՒՆՋ
ԵՒ ԹԴԹԱԿԻՑ ԻՒՐ

Փունջ 699 թուոյն մէջ մի անանուն նամակ կը կարդանք, որ թշնամանաց լուտանք մ'է ընդդէմ երկուց Սրբազան Պատրիարքաց և միաբանական Ուխտիս Ս. Երուսաղէմի։

Նամակին անանուն լինելուն պատճառաւ՝ մենք ուղղակի Փունջն կը ճանաչենք հեղինակ և պատասխանատու, ուստի և Փունջին կ'ուղղենք մեր խօսքը։

Փունջը կ'ամբաստանէ թէ՝ Պոլսոյ և Երուսաղէմի Ս. Պատրիարքները դաշնակից եղած են Եգիպտոսի աղգայինքն բարոյապէս մեռցնելու համար։

Փունջն կը հրատարակէ թէ՝ երկու Պատրիարքաց և Երուսաղէմի Միաբանութեան շնորհիւ Եգիպտոսի Խորհրդարանի դպրոցը գոցուած է և ուսանողք ու ուսուցիչք ցրուած։

Փունջն կը գուշակէ թէ՝ եկեղեցիներն եւս շուտով պիտի գոցուին, եթէ Մեսրոպ եպիսկոպոսն առաջնորդ չընտրուի նոյն Վիճակին։

Փունջն կրսպառնայ վերջապէս, թէ Երուսաղէմի և ոչ մի միաբանն պիտի յաջողի Եգիպտոսի առաջնորդական աթոռին վրայ բազմելու, ինչ-որ էլ ինչ-ուզեն հրեշտակ մը ըլլայ։

Արդ՝ թէ եւ մենք գիտենք, որ ոչ թէ միայն Փունջի սոյն ամբաստանութիւնն, այլ և իւր բոլոր հրատարակութիւնքն արժէք չունին Հասարակութեան առջեւ. թէ և համոզուած ենք, որ սոյն վայրախօս ամբաստանութիւնն՝ Փունջի և կամ իւր մի նմանակցին անհատական զրպարտութեան արդիւնքն է, և ոչ թէ Եգիպտոսի Հասարակութեան. թէ և կը գուշակենք, որ Փունջի հրատարակութեանց դէմ պատասխան գրելով՝ բաւականին կարեւորութիւն և արժանաւորութիւն տուած պիտի լինինք, զոր ամենեւին չունի Փունջն. բայց այս ամեն պարագաներն խմբնալով հանդերձ, դարձեալ պիտի պատասխանենք համառօտիւ, ինչպէս ՍԻՕՆԻ նախորդ թիւերով պատասխանեցինք Արշալոյսին։

Ինչպէս որ Փոնջի հրատարակութեան գլխաւոր շարժառիթն է Մեսրոպ Եպիսկոպոսի եգիպտական առաջնորդութիւնն, նոյնպէս է և դպրոցներ և եկեղեցիներ գոցուելու հնարագիտական համբաւն։ Երբ Մեսրոպ առաջնորդ լինի Եգիպտոսին, եկեղեցիները կը պայծառանան, դպրոցները կը բարեկարգուին, յառաջադիմութիւնն ու բարօրութիւնը կը ծովանան նոյն Վիճակին մէջ և Աղեքսանդրիոյ ու Փոնջի ներքոները մինչեւ յօդս կը բարձրանան։ Իսկ երբ Մեսրոպ հեռանայ կամ առաջնորդ չը լինի Եգիպտոսի, դպրոցներու և եկեղեցիներու եկամուտները կը սպառին, պարտքերը կը դիզուին, դռները կը փակուին, և եթէ երկնքէն հրեշտակներ եւս իջնեն, կարող չեն բանալ, որովհետեւ դպրոցներ և եկեղեցիներ բանալու հրաշագործ բանալին միայն Մեսրոպի ձեռքն է, որ իւր քնացած ժամանակ՝ ուրիշ մահկանացուի չը հաւատար, այլ միայն Աղեքսանդրիոյ և Փոնջի։

Այս հրաշագործ բանալիով, երբեմն Տրապիզոնի Վիճակին մէջ եւս 90 հատ դպրոցներ բացուած էին, որոնք, երբ Մեսրոպ հեռացաւ և բանալին իւր հետ տարաւ, իսկոյն մի աւուր մէջ գոցուեցան, ինչպէս որ մի աւուր մէջ բացուած էին։

Իրաւ է՛ որ, երկու Արքեպիսկոպոսարանքներն ու Երուսաղէմի Միաբանութիւնն այսպիսի հրաշագործ բանալի չունին, բայց շատ պիտի ցաւին, եթէ ստուգիւ իմանան, որ սոյնօրինակ հրաշագործութեան վրայ հիմնուած են Եգիպտոսի և Աղեքսանդրիոյ դպրոցներն, և ոչ թէ ժողովրդի համակամ ուսումնասիրութեան, արդիւնաբեր գործակցութեան և իրենց զաւակաց յառաջադիմական ըղձից և եռանդեան։ Վասն զի, եթէ մեսրոպեան հրաշագործութեան վրայ հիմնուած լինի իրենց զաւակաց ապագայն, Մեսրոպ եպիսկոպոսն մահկանացու լինելով, անշուշտ մի օր կը փոխի յաշխարհէս, իսկոյն Եգիպտոսի բովանդակ Վիճակին խորին թշուառութեան մէջ կ՚ընկղմին երկնքէն իջած հրեշտակներն անգամ կը տկարանան գոցուած եկեղեցիներն ու դպրոցներն բանալ։ Վայ այն խեղճ դպրոցներուն, որոց բանալին հրաշագործներու ձեռքն է, և ոչ թէ ժողովրդի՝ և իրեն ընտրած բանիբուն ուսումնականներու եւ դաստիարակներու։

Մենք այնպէս գիտենք և այնպէս կը հաւատանք, որ եթէ Եգիպտոսի վիճակին մէջ ազգային դպրոցներ կան և պիտի բարեկարգուին ու յառաջադիմեն, այդ մեծ գործը յատկապէս ժողովրդի ձեռքով պիտի կատարուի և ոչ Մեսրոպի կամ Կիրակոսի։ Վասն զի, Մեսրոպը ժողովրդին դրամ պիտի չըտայ դպրոցներու համար, այլ ընդհակառակն՝ դրամ պիտի պահանջէ ժողովրդէն իրեն բաղմադիմի ծախուց համար։ Իսկ եթէ դրամներն ու եկամուտներն եւս, Մեսրոպ եպիսկոպոսի ներկայութեամբ և բացակայութիւն, կը բազմանան և կը նուազին հրաշիւք, այդ գաղտնիքն մենք չը գիտենք, և հետեւապէս կանխաւ ներողութիւն կը խնդրենք այս մասին Աղեքսանդրիոյ և Փոնջի։

Շատ կը ցաւինք, որ Փոնջի կամ իւր թղթակիցն, ո՛ գիտէ ինչ մասնաւոր շահու համար, կը համարձակին ժողովրդի անունն իրենց խաղալիկ առնել, մերթ Պատրիարքներն ամբաստանել ու ժողովուրդ մեռցնելու դաղնակից կոչել, և մերթ Ազգային Վարչութեան ու Երուսաղէմի Միաբանութեան դէմ անպատկառ թշնա-

մանքներ տեղալ, անիրաւ անուանել, դպրոցներ և տաճարներ գոցելու դեղ ապիոյ կոչել, և այսպէս հասարակութիւն ողջմտութիւնը պատրելու համար՝ ամեն աչքակապութիւն ի գործ դնել։ Կը ցաւինք, այո, բայց ոչ թէ եղած ղպտարութեանց համար, այլ նայն իսկ Փոնջին համար, որ ստայոդ գրուածոց հրատարակութեամբ միայն կ'ապրի ու կը մնանի, և ոչ թէ ճշմարտութեան ապաստարելով։ Բայց ճշմարտութեան ձայն լսած ունի՞ Փոնջն, իւր բուսանդակ կենաց մէջ, որ կարողանայ իմանալ թէ ի՞նչ է ճշմարտութիւն։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Երբ արժանաւոր անձինք բարձր պաշտօններու կը հասնին, բնականաբէն ամեն մարդիկ կ'ուրախանան։

Այսպիսի ճշմարիտ ուրախութեամբ կ'աւետեմք ահա մեր համազգի Մեծ. Յ. Պապաքալ Մուրատեանի նոր պաշտօնը։

Մեծ. Մուրատեան, որ քաղաքիս Աստրիական Հիւպատոսարանի մէջ առեւնագրութեան, թարգմանութեան և Փոխ — Հիւպատոսութեան պաշտօն կը վարէր, այժմ նոյն Տէրութեան հրավարտակաւ Յոպպէի Հիւպատոս անուանեցաւ։

Ուրախութեամբ արտի շնորհաւորելով մեր Մեծ. Համազգուոյն այս նոր պաշտօնը՝ կը փափագիմք տեսնել զինքն աւելի բարձրագոյն պաշտօնի մէջ, որոյ համար գեղեցիկ գրաւականք են իւր հմտութիւնն, գործունէութիւնն և բարեհամբաւ վարքն ու բարքը։

— Քաղաքիս նախկին Կուսակալ Վ. սեմ. Էլի Փաշան փոխուեցաւ և իրեն յաջորդեց Վ. սեմ. Գեամիլ Փաշան, որ Կիպրոսի Կուսակալ էր։

— Հոանայեն գրուած տեղեկութիւններէն հեաւեւալը կը հաղորդենք մեր ընթերցողներուն։ «Կաթողիկոսական խնդիրն լուցաւ և Նոյեմ. 10 ին Էրեսփոխան իշխաններն ու ժողովականք, արդէն իւրեանց պաշտօնը աւարտած լինելով, իւրաքանչիւրն իրենց տեղը դարձան։ Իսկ ամսոյս 20 ին ամենայն փառաւորութեամբ և երգով նուագներով Սրբազան Կաթողիկոսն եւս ճանապարհ հանեցինք։

Ուղեւորութեանը ներկայ էին շատմը Ազգայինք և քաղաքիս բոլոր ակնաւոր իշխանք. այնպէս որ Կիլիկիոյ հորիզոնը պայծառ կը փայլէր և առաւել յաղթանակ վաստակող բանակի մը կը նմանէր, քան թէ Կիլիկիոյ Դահակալի մը ուղեւորութեան։

Ներկայ ամսոյս 28ին կաթողիկոսական Օծման հանդիսին ներկայ գտնուելու համար, Թուականէս 3 օր առաջ Սիմէոն Սրբազանն, քանի մի իշխաններով, գնաց ի Սիս և տակաւին հոն է։

Սիմէոն Սրբազանի ջանիւք Այնոէր Ընկերութիւն մի հաստատուեցաւ քաղաքիս մէջ, շաբաթական թերթ տուրքով, և արդէն 70 հոգի անդամ գրուեցան։ Այն Ընկերութեան նպատակն և գործոց վրայ ուրիշ անգամ տեղեկութիւններ կը հաղորդենք, ինչպէս և Սիսի ու Կիլիկիոյ նիւթական և բարոյական նկարագրութիւնն, ասկէ վերջ Աստուծոյ գիտողութեան կ'աւանդեմք»։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

MÉTHODE DE LECTURE

POUR LA LANGUE FRANÇAISE

A L'USAGE DES ARMÉNIENS

ԿՐԹՈՒԹԻՒՆ

ԳԱՂԼԻԱՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ԸՆԹԵՐՑՄԱՆ

Ի ՊԷՏՍ ՀԱՅՈՑ

Տպագրուած է Ս. Աթոռոյս Տպարանին մէջ, մաքուր թղթի վրայ, քանի մի պատկերներով, յատկապէս մեր Ազգային Դպրոցներու և ամէն Հայ անհատներու համար, որոնք կը փափաքին գործնական և դիւրին եղանակաւ վարժուիլ Գաղղիարէն լեզուի ընթերցման մէջ։ Բաղկացած է երկու մասներէ, յորոց առաջնոյն մէջ կը պարունակին գրքերը, վանկերը, բառերը, կարճ ընթերցուածներ՝ հայագիր հնչմամբ և հայերէն նշանակութեամբ միասին. իսկ երկրորդին մէջ կը պարունակին բարոյական մտածութիւններ և Ազգային Պատմութենէ ու Աշխարհագրութենէ գաղղիարէն թարգմանուած համառօտ հատուածներ։ Կը ծախսուի, ինչպէս Ս. Աթոռոյս Դրատան, նոյնպէս և Կ. Պոլսոյ Արուսաղէմատան մէջ։ Գին 100 գրուշ։

ՑԱՆԿ

ԴԵԿՏԵՄԲԵՐ

Մ՝ԻՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ • 265

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ • — *Բարկութիւն* • — *Երկիւղ* • — *Տրտմութիւն* • — *Սէր* • — *Կրօնաւորական թախծութիւն* • — *Հաստատակ արտաքինորութիւն մաքնոյ* • — *Մաքրութիւն որսվայնի* • 269

Ի ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻՉՍ ՄԵՐ ՍԱՀԱԿ ԵՒ ՄԵՍՐՈՎԲ *Ամ հրեշտակն Մասսեայ* • 276

ՀԱՏԸՆՏԻՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆԲ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ • 279

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՆԱՆՑ • 281

ՓՈՒՆՁ ԵՒ ԹՂԹԱԿԻՑ ԻՒՐ • 286

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ • 288

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

Ա• Աւանը ամսէ ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մէկուկէս ուրթածալ թղթով։

Բ• Տարեկան գինն է կիսու արծաթ Մէճիտիէ։ Հանդէրձ Հռոմապարհի ծախքովը կանխիկ վճարելի։

Գ• Զատ տեսարակ առնել սուլողը, պէտք է ամեն մէկ տեսրին չորս դահեկան վճարէ։